ՀՀԿա

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվար, 2023 թվականի № 7-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 84-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և 92-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 78-Լ որոշման 3-րդ կետը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից հայտարարված «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթի արդյունքները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձ հաստատել Հանրային հեռարձակողի կողմից ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-03/23 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված «Գրանթ Թորնթոն» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտ իրականացնելու ծառայությունների դիմաց «Գրանթ Թորնթոն» փակ բաժնետիրական ընկերությանը վճարման ենթակա գումարի չափը սահմանել 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը):

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

25 հունվար, 2023 թվականի
ք. Երևան